ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«24» 01 2022թ. N 20/72

«ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Է. Փոթոյանին
ք. Երևան, Աբովյան 23

Հարգելի պարոն Փոթոյան

Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Գնորդ) և «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև ՀՀ ԱԱԾ կարիքների համար Դեղորայքի ձեռքբերման համար 2021 թվականի հունվարի 26-ին կնքված թիվ ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ԴԵՂՈՐԱՅՔ/3 ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) և դրա հիման վրա 08.02.2021թ. կնքված N 1 Համաձայնագրի համաձայն «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն պարտավոր էր ՀՀ ԱԱԾ-ին մինչև 2021 թվականի դեկտեմբերի 15-ը ներառյալ մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակները նշված քանակներով՝

Շարքային համարը	Ապրանքի անվանումը	Չ/մ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Մատակարարման ժամանակացույց 4-ին եռամսյակ, բայց ոչ ուշ քան 15.12.2021թ.	Չմատակարարված քանակ	Գումար /ՀՀ դրամ/ 4-րդ եռամսյակ
47	Ֆոսֆոլիպիդներ (էսենցիալ)-ԷՖԼ A05C	հատ	103,00	600	61800	300	300	30900
72	Քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ) R06AC03, D04AA09	հատ	45,60	360	16416	180	180	8208
	Ընդամենը				**78216**			**39108**

Հաշվի առնելով նշված ցանկով նախատեսված քանակների մասով ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ ԱԱԾ-ն 24.01.2022թ-ին միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը և N 1 Համաձայնագիրը վերը նշված ապրանքատեսակների մասով:

Տեղեկացնում եմ, որ «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն՝ պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 215.09 (երկու հարյուր տասնհինգ դրամ, ինը լումա) ՀՀ դրամ, որպես տույժ և տուգանք՝ Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 և 900008000664 հաշվեհամարներին ենթակա են գանձման համապատասխանաբար 3910,8 (երեք հազար ինը հարյուր տաս դրամ, ութսուն լումա) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և 5866.2 (հինգ հազար ութ հարյուր վաթսունվեց դրամ, քսան լումա) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ որակավորման ապահովում:

Հարգանքով՝

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ